ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ԼՐԱԳՐՈՂԻ ՄՈՒՏՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՅԴ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Իրավական չափանիշներ ձևավորելու անհրաժեշտությունը և նպատակը .. 3

2. Լրագրողի աշխատանքին և ազատությունից զրկման վայրերին առնչվող միջազգային փորձն ու չափանիշները.....4

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը 11

4. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եզրահանգումներն ու իրավական չափանիշները 13

1. Իրավական չափանիշներ ձևավորելու անհրաժեշտությունը և նպատակը

Մարդու իրավունքների պաշտպանին լրատվական գործունեություն իրականացնող մի շարք անձինք և լրագրողներ հասցեագրել են հարցադրումներ՝ կապված ազատությունից զրկման վայր, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկ իրենց մուտքի իրավունքի և պետական իրավասու մարմնի պատասխանի իրավաչափության հետ: Ըստ հարցադրումների՝ քրեակատարողական մարմինը մերժում է իրենց խնդրանքը՝ առանց պատշաճ պատճառաբանության:

Այդ հարցադրումների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բարձրացվող հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է իրականացնել իրավական ուսումնասիրություն և այդ ուսումնասիրության արդյունքում նախանշել կոնկրետ չափանիշներ, որոնք պետք է կիրառելի լինեն քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի հարցը որոշելիս:

Ժողովրդավարական պետությունում լրագրողի աշխատանքն առանձնանում է առանցքային նշանակությամբ: Այն ունի հանրային կարևորություն և հանրային մարմինների նկատմամբ հասարակական վերահսկողության կարևոր երաշխիքներից է: Լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի աշխատանքի շնորհիվ է, որ հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ հնարավորություն է ստանում հետևելու հանրային գործառույթի իրականացմանը կոնկրետ մարմնի կողմից:

Դրա հետ միասին, յուրաքանչյուր մարմին իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված կոնկրետ գործառույթներ: Առանձին դեպքերում այդ գործառույթների բնույթն օբյեկտիվորեն պահանջում է յուրաքանչյուր մարմնի աշխատանքի նկատմամբ տարբերակված մոտեցում, իսկ հրապարակային աշխատանքի առումով՝ իրականացման հատուկ պայմաններ: Սա, իհարկե, կարող է արտահայտվել նաև հանրության, այդ թվում՝ լրագրողների հետ հանրային մարմնի հարաբերություններում:

Հենց նկարագրված հիմնարար հարցերի իրացումն էլ գործնականում առաջացնում է ոչ միատեսակ ընկալումներ, իսկ առանձին դեպքում՝ հանգեցնում հակասությունների:

Սույն իրավական ուսումնասիրության նպատակն է քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու լրագրողի իրավունքի և այդ կապակցությամբ պետական իրավասու, կոնկրետ դեպքում՝ քրեակատարողական մարմնի պարտականության առանձնահատկությունները վեր հանելու և դրանց նկատմամբ գործադրելի իրավական չափանիշներ ձևավորելու միջոցով նպաստել երկրում իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը:

Իրավական ուսումնասիրություն իրականացնելիս ելակետային իրավական արժեքներ են կազմել մի կողմից լրագրողական գործունեության ազատությունը, տեղեկություններ փնտրելու և ստանալու լրագրողի իրավունքը, մյուս կողմից՝ պետական պահպանվող հաստատությունում, կոնկրետ դեպքում՝ ազատությունից զրկման վայր հանդիսացող քրեակատարողական հիմնարկում անվտանգության ապահովումն ու այլոց իրավունքների պաշտպանությունը:

Մեթոդաբանական առումով ուսումնասիրությունն իրականացվել է ոլորտի միջազգային իրավական չափանիշների ու փորձի վերհանմամբ, ՀՀ սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համադրմամբ: Արդյունքում, նախանշվել են պայմաններ, որոնք Մարդու իրավունքների պաշտպանի համոզմամբ, պետք է կիրառելի լինեն քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի հարցը լուծելիս:

2. Լրագրողի աշխատանքին և ազատությունից զրկման վայրերին առնչվող միջազգային փորձն ու չափանիշները

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի ‹‹Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին›› թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականը սահմանում է, որ խոսքի ազատության համար բարենպաստ միջավայրը պետք է ունենա մի շարք առանցքային հատկանիշներ, որոնք

համակցության մեջ խոսքի և տեղեկատվության ազատության և ակտիվ հանրային բանավեճերի զարգացման պայմաններ կստեղծեն: Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն իրավունք ունի ստանալու հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: **Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը:** Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

Հանձնարարականի՝ հանրային բանավեճին նպաստելու սկզբունքն ամրագրող 30-րդ կետի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում լրագրողների և լրատվական ոլորտի այլ ներկայացուցիչների անխոչընդոտ գործունեությունն ապահովելու տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերջիններիս խոսքի ազատությունը պետք է լայնորեն պաշտպանված լինի: Այսպիսի պաշտպանությունը պետք է ընդգրկի նրանց գործունեության հետ գործառութային կապ ունեցող երաշխիքներ, որոնց թվում առանձնացված են տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, **լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը**, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ լրագրողի գործառնական կամ գործառութային ազատությունները, որոնք ներառում են լուրերը, տեղեկությունների հավաքումը, մշակումն ու տարածումը, անհրաժեշտ են լրագրողի խոսքի ազատությունը գործնական և արդյունավետ դարձնելու համար[1]:

Լրատվական գործունեությանն առնչվող միջազգային չափանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք լրագրողի աշխատանքի երաշխիքներ են

[1] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016806415d9

պարունակում նաև՝ կապված փակ և մասնավորապես՝ պատիժ կատարող կամ կալանքի վայր հանդիսացող հաստատությունների հետ: Մասնավորապես, «Եվրոպական բանտային կանոնների» 90-րդ՝ հանրային իրազեկվածության կանոնի համաձայն՝ կարևոր է, որ հասարակությունը և լրատվամիջոցները տեղյակ լինեն քրեակատարողական հիմնարկների գործունեության մասին: Քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը պետք է զարգացնեն լավ հարաբերություններ հանրության ու լրատվամիջոցների հետ և նրանց իրազեկեն քրեակատարողական հիմնարկի առօրյա գործունեության մասին: Քրեակատարողական հիմնարկների պետերը պետք է պարբերաբար հանդիպումներ ունենան քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների հետ, և անհրաժեշտության դեպքում ապահովեն նրանց մուտքը հիմնարկ: Լրատվամիջոցները և տեղական համայնքների ներկայացուցիչների այցելությունները պետք է խրախուսվեն՝ միաժամանակ ապահովելով դատապարտյալների մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը[2]: Կարևոր գործոն է համարվում նաև ազատությունից զրկման վայրի անվտանգությունը:

Այսպիսով, միջազգային իրավաբանությունը վկայում է, որ լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Վերը նշվածից բացի, միջազգային չափանիշները բովանդակում են նաև քրեակատարողական համակարգի անվտանգության ապահովման կարևորության վերաբերյալ դրույթներ: Այսպես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի նախաբանում նշվում է, որ ազատազրկման ձևով պատիժներ ի կատար ածելու և դատապարտյալների ուղղման համար **անհրաժեշտ է հաշվի առնել անվտանգության, ապահովության և կարգապահության պահանջները՝**

[2] https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae

միաժամանակ ապահովելով նաև բանտի այնպիսի պայմաններ, որոնք չեն նսեմացնի մարդու արժանապատվությունը և բովանդակալից զբաղմունքի ու ուղղման ծրագրերի հնարավորություն կընձեռեն դատապարտյալներին՝ այդ կերպ նրանց պատրաստելով հասարակություն վերադարձին:

Հանձնարարականի 24.12-րդ կանոնի համաձայն՝ ազատազրկվածները պետք է մամուլի հետ հաղորդակցվելու հնարավորություն ունենան, քանի դեռ առկա չեն այն արգելելու **ծանրակշիռ պատճառներ անվտանգության և կարգի պահպանության, հանրային շահի կամ տուժողների, այլ դատապարտվածների կամ անձնակազմի պաշտպանության նկատառումներով**[3]**:**

Եվրոպայի խորհրդի՝ բանտային կառավարման գրքույկում (Prison Management Booklet) նշվում է, որ անվտանգության հետ կապված հարցերը պետք է առաջնահերթություն ունենան: **Քրեակատարողական հիմնարկների գլխավոր դերակատարությունն անձանց անազատության մեջ պահելն է: Անվտանգությունն է արդյունավետ ռեժիմի զարգացմանն ուղղված միջոցառումների հիմքը: Անվտանգության վերաբերյալ իրազեկվածությունը պետք է առաջնահերթ թիրախ լինի հիմնարկի ողջ վարչակազմի համար՝ անկախ աշխատակիցների գործառույթների ու պարտականությունների բնույթից:**

Քրեակատարողական հիմնարկում անվտանգության ապահովումը ենթադրում է վերապատրաստված անձնակազմ, ֆիզիկական անվտանգության, ընթացակարգային արդյունավետ միջոցառումների ապահովում և դինամիկ հսկողության զարգացում: **Հիմնարկի անվտանգությունը պետք է լինի վարչակազմի հիմնական մտահոգության առարկա**[4]**:**

Խնդիրը համակողմանի դիտարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ուսումնասիրվել է նաև արտասահմանյան երկրների փորձը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում առկա են քրեակատարողական հիմնարկների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության, այդ թվում՝ լրագրողների հետ համագործակցությանն առնչվող մանրամասն կարգավորումներ:

---

[3] http://pjp-eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+(2006)+2+on+the+European+Prison+Rules.pdf/e0c900b9-92cd-4dbc-b23e-d662a94f3a96

[4] https://rm.coe.int/prison-management-booklet-eng/16807185bd

Այսպես, Կալիֆոռնիայում զանգվածային լրատվության հասանելիության վերաբերյալ բանտերի քաղաքականության ու ընթացակարգերի հետ կապված կարգավորումները սահմանված են Կալիֆոռնիայի կանոնների ակտով (California Code of Regulations): Ակտի 3260-րդ կետի համաձայն՝ հասարակությունն իրավունք և միաժամանակ պարտականություն ունի իմանալու, թե ինչպես է ծավալվում ուղղիչ հիմնարկների գործունեությունը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է պատշաճ գնահատման ենթարկել բոլոր հանգամանքները՝ հիմնարկի անվտանգությանը սպառնացող վտանգի կամ այնտեղ պահվող անձանց և վարչակազմի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը միջամտության տեսանկյունից:

Ակտի 3261.1-րդ կետն ամրագրում է, որ զանգվածային լրատվամիջոցի մուտքը հիմնարկ[5] կարող է իրականացվել միայն հիմնարկի պետի, լրատվական ծառայության կամ այլ իրավասու պաշտոնատար անձի նախնական թույլտվությամբ:

Դրանից բացի, Ակտը կարգավորում է նաև հիմնարկի ներսում լրագրողի գործունեության որոշակի պայմաններ ու սահմանափակումներ: Մասնավորապես, **բոլոր այն դեպքերում, երբ լրատվամիջոցի ներկայացուցչի մուտքը կարող է անմիջական վտանգ ներկայացնել անվտանգությանն ու ապահովությանը կամ հանգեցնել լուրջ գործառնական խնդիրների, հիմնարկի պետը կամ իրավասու պաշտոնատար անձը կարող է մուտքը սահմանափակել կամ որոշակի պայմաններ առաջադրել:** Լրատվամիջոցի ներկայացուցիչները հիմնարկի ներսում կարող են գտնվել վարչակազմի աշխատակցի մշտական հսկողության ներքո, բացառությամբ առանձնազրույցների անցկացման[6]: Դրանից բացի, ԱՄՆ նույն նահանգի Ուղղման և վերականգնման դեպարտամենտի կայքում արդեն իսկ զետեղված են տեղեկություններ այն մասին, որ ձայնագրող կամ տեսանկարահանող սարքեր օգտագործելն արգելվում է[7]:

Նյու Յորքում ուղղիչ հիմնարկների, դրանց գործունեության, աշխատակիցների և այնտեղ պահվող անձանց վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը զանգվածային լրատվամիջոցներին կարգավորում է ստացել Ուղղիչ աշխատանքների

---

[5] Կալիֆոռնիայի ուղղման և վերականգնման դեպարտամենտին պատկանող հիմնարկները, պայմանագրային հիմնարկներն են բանտերը, հանրային ուղղիչ հիմնարկները, կալանավորվածներին պահելու վայրերը, վերասոցիալականացման հաստատությունները:

[6] https://www.spj.org/pdf/prisonaccess/prisonaccess-california.pdf

[7] https://news.cdcr.ca.gov/news-releases/2012/05/24/media-access-to-prisons-and-prisoners/:

դեպարտամենտի հրահանգով, որի նախաբանում նշվում է, որ ակտը կոչված է հավասարակշռելու հասարակության անունից տեղեկատվություն ստանալու լրատվամիջոցի իրավունքը և հիմնարկի վարչակազմի և այնտեղ պահվող անձանց իրավունքները: Այն կարգավորում է նաև մի կողմից՝ ուղղիչ հիմնարկներում տիրող իրավիճակի մասին տեղեկացված լինելու, մյուս կողմից՝ հիմնարկում գտնվող անձանց, հիմնարկին կից համայնքների անվտանգության ու ապահովության հարաբերակցությունը:

Նույն հրահանգը հիմք է ընդունում ԱՄՆ Գերագույն դատարանի դատական նախադեպերը, որոնց համաձայն՝ **լրատվամիջոցներն իրավունք չունեն մուտք գործելու ուղղիչ հիմնարկների բնակեցված հատվածները՝ ելնելով պետության կողմից անվտանգությունն ու ապահովությունը պահպանելու իրավաչափ անհրաժեշտությունից:** Ըստ այդմ, հրահանգը ուղղիչ հիմնարկ լրատվամիջոցների մուտքի հետ կապված կարգավորումներ չի նախատեսում: Միևնույն ժամանակ, **այն ամրագրում է հասարակական իրազեկվածության ապահովման այնպիսի ընթացակարգեր, ինչպիսիք են՝ մամլո հաղորդագրությունները, հարցազրույցները՝ պահպանելով տեղեկատվության ազատության, անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական կարգավորումները:**

Հրահանգը կարգավորում է նաև ազատությունից զրկված անձանց հետ լրատվամիջոցների հարցազրույցների կարգը՝ ամրագրելով հիմնարկի պետի և Վարչության լրատվական ծառայության նախնական թույլտվության պահանջ, վերջիններիս կողմից հարցազրույցի անցկացման վայրի որոշման և այլ տարածքներ լրագրողի մուտքի արգելքի մասին դրույթներ[8]:

Մեծ Բրիտանիայի բանտային կանոնների 73-րդ հոդվածի համաձայն՝ անվտանգության և կարգի պահպանման նկատառումներից, հանցագործությունների կանխարգելման և այլ անձանց շահերից ելնելով՝ անձանց մուտքը քրեակատարողական հիմնարկ կամ դատապարտյալին տեսակցելը կարող է արգելվել այն ժամանակահատվածի համար, որն ըստ համապատասխան պաշտոնատար անձի կհամարվի անհրաժեշտ:

[8] https://www.spj.org/pdf/prisonaccess/prisonaccess-newyork.pdf

Սույն դրույթը չի տարածվում քրեակատարողական հիմնարկի անձնակազմի, դատարանի ներկայացուցչի, իրավախորհրդատուի (ով օրենքի պահանջներին համապատասխան այցելել է հարցաքննության նպատակով) այցերի վրա[9]:

Ինչ վերաբերում է լրագրողների մուտքը քրեակատարողական հիմնարկ թույլատրելու միջազգային պրակտիկային, ապա դրա ուսումնասիրությունը վկայում է, որ այլ երկրներում գործող լրատվամիջոցները նույնպես ունեն քրեակատարողական հաստատություններ մուտք գործելու մասնագիտական իրավաչափ հետաքրքրություն: Օրինակ՝ ըստ «The Guardian» պարբերականի հրապարակման՝ Մեծ Բրիտանիայում արգելվել էր լրագրողների մուտքը քրեակատարողական հիմնարկ: Տվյալ դեպքին ի պատասխան Մեծ Բրիտանիայի Արդարադատության նախարարության լրատվության ծառայությունից հայտնել են, որ առկա չեն համապատասխան ռեսուրսներ գլխավոր ընտրություններից առաջ «The Guardian» պարբերականի լրագրողների այցը քրեակատարողական հիմնարկ կազմակերպելու համար[10]: Վերը նշված պարբերականը, սակայն, հայտնում էր, որ նույն ժամանակահատվածում իրականացվել է «Times» և «BBC» լրատվականների ներկայացուցիչների մուտքը քրեակատարողական հիմնարկ:

Ազատությունից զրկման վայրեր լրատվամիջոցների մուտքի հարցերն արդիական են և անընդհատ քննարկման առարկա են նաև լրագրողական միավորումների կամ ընկերությունների կողմից[11]:

Նկարագրված միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ **անկախ կիրառվող օրենսդրական կանոնների ընդհանրությունից կամ դրանց մանրամասն լինելուց՝ քրեակատարողական հաստատություններ լրագրողական գործունեության կազմակերպման հարցում կիրառվում է իրավական բանաձև առ այն, որ անհրաժեշտ է ապահովել այդպիսի հիմնարկի՝ իբրև փակ հաստատության ու պետության առջև դրված կոնկրետ խնդիրներ իրականացնող մարմնի անվտանգության և հասարակության իրազեկված լինելու իրավունքի ու հանրային վերահսկողության պահանջի ողջամիտ հարաբերակցություն:**

[9] http://www.legislation.gov.uk/uksi/1999/728/contents/made
[10] https://www.theguardian.com/society/2015/jun/24/why-moj-scared-journalists-prisons
[11] Օրինակ՝ https://www.rcfp.org/

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը երաշխավորում է կարծիքն ազատ արտահայտելու յուրաքանչյուրի իրավունքը: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Երաշխավորվում է նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը:

Սահմանադրական այս դրույթն ամրագրում է նաև, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության մեկ այլ՝ 51-րդ հոդվածը երաշխավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու յուրաքանչյուրի իրավունքը: Հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Կարծիքի արտահայտման ազատության բաղկացուցիչ մասը կազմող՝ **տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության** սահմանադրական երաշխիքը կոչված է պաշտպանելու այդ ազատության չարդարացված սահմանափակումներից և պետության միջամտությունից[12]: Միևնույն ժամանակ, սահմանադրական առանձին դրույթով **տեղեկություններ ստանալու անձի իրավունքի** երաշխավորումն արդեն ենթադրում է ոչ թե պետության պարտավորությունը՝ ձեռնպահ մնալու անհարկի սահմանափակումներից ու

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրության համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016:
http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf

միջամտությունից, այլ վերջինիս պարտավորությունը՝ տրամադրելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

Վերը նշված իրավունքների՝ սահմանադրական մակարդակում առանձնացումը, դրանց բովանդակությունների հստակեցումը հենց պայմանավորված են սահմանադրական մակարդակով այդ իրավունքների՝ որպես ժողովրդավարության, բաց կառավարման, հանրային իշխանության թափանցիկության և հաշվետվողականության առանցքային տարրերի կարևորության ընդգծման անհրաժեշտությամբ:

‹‹Տեղեկատվության ազատության մասին›› օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *յուրաքանչյուր անձ* ***իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը*** *և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:*

‹‹Զանգվածային լրատվության մասին›› ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *լրագրող է լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը, լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչը, նրա հետ կնքած աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա* ***տեղեկատվություն փնտրողը, հավաքողը,*** *ստացողը, պատրաստողը, խմբագրողը:*

Լրագրողական գործունեության և խոսքի ազատության իրացման երաշխիքներն ամրագրում են ստացել օրենքի 4-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ *լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա:*

Բացի այդ, նույն հոդվածի 4-րդ մասն ամրագրում է լրագրողական գործունեության նկատմամբ գրաքննության, լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքի արգելքը, խտրականության արգելքը և այլն:

ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի ‹‹Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների

ներքին կանոնակարգը հաստատելու մասին›› N 1543-Ն որոշման 137-րդ և 186-րդ կետերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կանոնակարգը նախատեսում է լրագրողի գործունեությանն առնչվող դրույթներ՝ դատապարտյալի լուսանկարահանման, տեսանկարահանման կամ հարցազրույց անցկացնելու համար վերջինիս համաձայնության և վարչակազմի թույլտվության պահանջների ամրագրմամբ:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 333-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգն ամրագրում է միայն պետական կառավարման մարմնում լրագրողի հավատարմագրման և պետական մարմնի գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կազմակերպական հարցը[13]: Կարգի 18-րդ կետն ամրագրում է, որ *պետական մարմնի միջոցառումներից դուրս լրագրողի այցելությունը պետական մարմին համաձայնեցվում է պետական մարմնի պատասխանատուի հետ: Այդ դեպքում (ինչպես նաև միջոցառումների ժամանակ) լրագրողը պետական մարմին է այցելում հավատարմագրված լրագրողների ցուցակի և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ առանց պետական մարմնի տարածք մուտքի անցագրի:*

4. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եզրահանգումներն ու իրավական չափանիշները

Ազատությունից զրկման վայրերի հետ կապված՝ լրագրողական գործունեության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության երաշխավորման առնչությամբ ՀՀ օրենսդրությունն ամրագրում է ընդհանուր բնույթի կանոններ: Այսինքն՝ այդ վայրերում, իսկ կոնկրետ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկներում լրագրողական աշխատանքի կազմակերպման հատուկ ընթացակարգեր, այդ հաստատությունների հետ փոխհարաբերության հատուկ կանոններ օրենսդրական մակարդակում առկա չեն:

[13] http://www.gov.am/am/accreditation/

Նման պայմաններում խոսքի ազատության և, մասնավորապես, լրագրողական գործունեության ազատության ապահովման ու պետական մարմնի համարժեք պարտականության հարցերը պետք է դիտարկել հիմնական իրավունքների երաշխավորման սահմանադրաիրավական սկզբունքների համատեքստում՝ հիմք ընդունելով միջազգային իրավական մոտեցումները:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սահմանադրական այս երաշխիքը ենթադրում է, որ պետությունն իր բոլոր դրսևորման ձևերով կաշկանդված պետք է լինի հիմնական իրավունքներով[14]: Սահմանադրական այս դրույթի ուժով որպես անմիջականորեն գործող իրավունքներ՝ կարծիքի արտահայտման ազատության և տեղեկություններ ստանալու իրավունքի իրավական բովանդակությունը կանխորոշվում է իրավական որոշակիության, համաչափության, միջազգային իրավական պրակտիկայի հաշվառման սկզբունքներով:

Սահմանադրության՝ իրավական որոշակիության սկզբունքն ամրագրող 79-րդ հոդվածի համաձայն՝ *հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Սահմանադրության 81-րդ հոդվածն ամրագրում է, որ *հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:*

Ասվածի հաշվառմամբ, ստացվում է՝ կոնկրետ իրավիճակում որոշում կայացնող մարմինն օրենսդրական մակարդակում ունի լայն հայեցողություն: Դրանով հանդերձ,

[14] Տե՛ս Հայաստանի Հանրապետության 2015թ. Սահմանադրության համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 27:
http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf

յուրաքանչյուր որոշում դրա հասցեատիրոջ, կոնկրետ դեպքում՝ լրագրողի համար պետք է լինի բավարար կանխատեսելի և որոշակի, ինչն էլ ենթադրում է գործնականում այդ որոշման իրավական և փաստական հիմնավորվածության պահանջ:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ քրեակատարողական հիմնարկներն ազատությունից զրկման վայրեր են, այսինքն՝ այդ իմաստով փակ հաստատություններ են, որտեղ պահվում են ենթադրյալ հանցանք կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցանքը կատարելու համար մեղավոր ճանաչված և հասարակության համար որոշակի վտանգ ներկայացնող անձինք: **Հետևաբար, քրեակատարողական հիմնարկների բնականոն աշխատանքը, այնտեղ գտնվող անձանց անվտանգությունն ինքնին կարող են արդարացված հիմք լինել՝ սահմանափակելու այդ հիմնարկների գործունեության հրապարակայնությունը և սահմանելու հասարակական վերահսկողության առանձնահատուկ ընթացակարգեր:**

Այսքանով հանդերձ, պետական մարմնի կողմից լրագրողի խնդրանքի մերժումը, օրինակ, ‹‹աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով›› ընդհանրական բնույթի ձևակերպմամբ, չի կարող արտահայտել լրագրողի՝ տեղեկություններ ստանալու ազատության և քրեակատարողական հիմնարկի բնականոն գործունեության միջև արդարացի հավասարակշռության արդյունքը: Սա նշանակում է, որ անգամ քրեակատարողական հիմնարկի անվտանգության, ազատությունից զրկված անձանց մասնավոր կյանքի ապահովման արդարացվածության պայմաններում պետական մարմնի այսպիսի ընդհանրական մերժումը կարող է ոչ հիմնավոր լինելու տպավորություն ստեղծել:

Ավելին, Քրեակատարողական հիմնարկի կամ այլ իրավասու մարմնի կողմից լրագրողի խնդրանքի մերժումը՝ պայմանավորված ընդհանրական բնույթի որևէ պատճառաբանությամբ, կարող է ընկալվել ոչ այնքան իբրև քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքն այդ պահին կազմակերպելու՝ հիմնավոր պատճառով անհնարինության, որքան վերջինիս մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու արդյունք: **Այդպիսի ընդհանրական պատասխանը լրագրողի տեսանկյունից կարող է ողջամտորեն ընկալվել որպես իր աշխատանքի խոչընդոտ:**

Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ պետական մարմինների հանրային-իրավական վարքագիծը, այդ թվում՝ քաղաքացի-պետական մարմին փոխգործակցության շրջանակներում, պետք է ունենա բավարար թափանցիկություն այն առավելագույն սահմաններում, որ չխոչընդոտի այդ մարմնի առջև դրված խնդիրների լուծմանը:

Կարևոր է նաև նկատի ունենալ, որ պետական մարմինների աշխատանքի նկատմամբ հանրային վստահությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն այդ մարմինների գործողությունների օրինականությամբ, այլև հասարակության առջև նրանց հաշվետվողականության աստիճանով: Սա առաջ է բերում արդարացված պահանջ, որ պետական մարմնի որոշումը, գործողությունը կամ անգործությունը պետք է լինի բավարար որոշակի և համոզիչ հենց քաղաքացու ընկալման տեսանկյունից:

Քրեակատարողական հիմնարկի կամ այլ իրավասու մարմնի՝ լրագրողին ուղղված պատասխանը պետք է բովանդակի տեղեկություններ, որոնք ողջամտորեն կվկայեն, որ, ասենք, քրեակատարողական հիմնարկի շենքում լրագրողի աշխատանքը կազմակերպելու նպատակով ռեսուրսների առանձնացումը տվյալ պահին չի կարող իրականացվել կամ այդ աշխատանքը կոնկրետ ժամանակահատվածում կարող է խաթարել ազատությունից զրկման վայրի անվտանգությունը կամ խախտել այլոց իրավունքները:

Պետական մարմնի՝ լրագրողին ուղղված պատասխանում պետք է լինեն նաև խոչընդոտող հանգամանքների վերացման դեպքում լրագրողի խնդրանքը բավարարելու հնարավորության և ժամանակի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ: Այդպիսիք պետք է լինեն՝ չբավարարվելով միայն, օրինակ, «հետագայում լրացուցիչ տեղեկացնելու» կամ «ապագայում հարցին անդրադառնալու» ընդհանրական խոստումով:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տվել ձևավորել հետևյալ եզրահանգումները՝

- **ցանկացած պետական գործառույթի իրականացման վերջնական հասցեատերը հասարակությունն է, որի յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա հետևելու այդ գործառույթի իրականացմանը՝ դրա**

վերաբերյալ սեփական պատկերացումները կամ գնահատականը ձևավորելու նպատակով.

- հասարակական այդպիսի վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել, միայն եթե պետական մարմիններից յուրաքանչյուրը գործում է բավարար թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների պահպանմամբ՝ իր առջև դրված խնդիրներին համապատասխան.
- պետական մարմնին հասցեագրված քաղաքացու ցանկացած դիմում կամ բողոք պետք է ստանա պատշաճ արձագանք:
- հատկապես ուշադրության է արժանի, երբ պետական մարմնին դիմում է ներկայացվում լրագրողական մասնագիտական գործունեության շրջանակներում: Լրագրողական մասնագիտական անխոչընդոտ աշխատանքն ունի հանրային կարևորություն: Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցչի պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով.
- վերը նշվածով հանդերձ, քրեակատարողական հիմնարկներն ապահովում են հանցավորության կանխարգելման ու դրա դեմ պայքարի պետական գործառույթի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ազատությունից զրկված անձանց նախնական կալանքի տակ պահելու կամ նրանց պատժի կատարման ապահովումը: Քրեակատարողական հիմնարկները խնդիր ունեն երաշխավորելու այլոց իրավունքներն ու անվտանգությունն այդ վայրերում, որտեղ պահվում են քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարած կամ այդպիսի արարք կատարելու մեջ մեղադրվող անձինք: Սա նշանակում է, որ քրեակատարողական հիմնարկն ինքնին պետք է անվտանգ տարածք լինի այնտեղ գտնվող յուրաքանչյուր անձի՝ կալանավորվածի կամ դատապարտվածի, հիմնարկի անձնակազմի, ինչպես նաև այցելուների համար.
- քրեակատարողական հիմնարկների առջև դրված այս խնդիրներն են, որ արդարացնում են դրանց գործունեության հրապարակայնության սահմանափակումները և հասարակական վերահսկողության առանձնահատկությունները.

- քրեակատարողական հիմնարկում կամ ազատությունից զրկման այլ վայրում լրագրողի աշխատանքի կազմակերպման հատուկ կանոններ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն: Նմանատիպ իրավիճակներում թե՛ պետական մարմնի վարքագծի հստակությունը լրագրողի համար, թե՛ լրագրողական գործունեության կազմակերպումը՝ առանց քրեակատարողական հիմնարկի անվտանգությունն ու բնականոն աշխատանքը խաթարելու, այլոց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, կարող են ամբողջությամբ ապահովվել այդպիսի հատուկ կանոնների նախատեսման պայմաններում՝ միջազգային առաջադեմ փորձի հաշվառմամբ: Սա նաև կապահովի որոշակիություն թե՛ պետական մարմնի, թե՛ լրագրողների համար.
- քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու լրագրողի խնդրանքի այնպիսի պատասխան մերժումը, որը չի պարունակի սույն իրավական վերլուծության մեջ նշված կոնկրետ տեղեկությունները, չի կարող լինել ընդունելի.
- այս կանոնների հիմքում ընկած հիմնարար գաղափարն այն է, որ պետական յուրաքանչյուր մարմնի համար օրենքին համապատասխան գործելու պահանջը պարտադիր ենթադրում է նաև այնպիսի վարքագիծ, որն այդ մարմնի աշխատանքը հանրության համար դարձնում է ընկալելի և հետևաբար՝ նրա հանդեպ ձևավորում հանրային վստահություն.
- ուստի, ընդունելի չեն լրատվական գործունեություն իրականացնող անձին կամ լրագրողին տրվող մերժման այնպիսի պատասխաններ, որոնց հիմքում միայն ընկած են «աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով», «հետագայում լրացուցիչ տեղեկացնելու» կամ «ապագայում հարցին անդրադառնալու» ընդհանրական բնույթի ձևակերպումներ: Դրանք պատասխանի հասցեատիրոջ, կոնկրետ դեպքում լրագրողի համար օբյեկտիվորեն չեն ապահովում հստակություն՝ պատկերացնելու, թե իր խնդրանքի մերժման հիմքում ընկած ի՞նչ հստակ հանգամանքներ են առկա, ե՞րբ և ի՞նչ պայմաններում հնարավոր կլինի այն բավարարել: